ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » հուլիսի 2018 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ԱՐԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սաղաթելյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-339-14.06.2018-ՏՀ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հուլիսի 16-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 967 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-339-14.06.2018-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Օրենքի նախագծով առաջարկվում է սահմանել, որ ավելացված արժեքի հարկից ազատվում է ոչ միայն շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարայով տարայավորված ապրանք արտադրողի, այլ նաև իրացնողի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափանիշները բավարարող շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարայի օտարումը: Օրենքի նախագծի ընդունման հիմնավորման համաձայն՝ առաջարկը հիմնավորվում է նրանով, որ օրենքի նախագծի ընդունմամբ կբացառվի տնտեսվարող սուբյեկտների կողմից ԱԱՀ-ի կրկնակի վճարումը, և արդյունքում կապահովվի շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարայով տարայավորված ապրանքների գների կայունություն:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով գործող օրենքի քննարկվող հոդվածը թողնել անփոփոխ՝ հաշվի առնելով հետևյալ հանգամանքները՝

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի ընդունմամբ և դրանից հետո կատարված օրենսդրական փոփոխություններով տարայի՝ ԱԱՀ-ով հարկման կարգավորումները (այդ թվում՝ ԱԱՀ-ով հարկման բազայի որոշման կանոնները, ԱԱՀ-ից ազատման շրջանակը) արդեն իսկ երկու անգամ վերանայվել են, և ներկայացված առաջարկության ընդունումը կնշանակի կես տարվա ընթացքում երրորդ փոփոխությունը կատարել խնդրո առարկա հարցին վերաբերող կարգավորումներում: Այս առումով, գտնում ենք, որ անհրաժեշտ է խուսափել Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում հաճախակի կատարվող և տեղային նշանակություն ունեցող փոփոխություններից, քանի որ դրանք ոչ միայն չեն բխում կայուն և կանխատեսելի հարկային օրենսդրություն, հետևաբար, նաև՝ հարկային միջավայր ձևավորելու քաղաքականությունից, այլև ուղղակիորեն հակադրվում են այդ քաղաքականությանը:

Հատկապես, որևէ կերպ երաշխավորված չէ, որ տարայի՝ ԱԱՀ-ով հարկման համակարգում առաջարկվող փոփոխությունը միանշանակորեն բարելավում է ենթադրում, և, որ այս առաջարկությունն ընդունելի կլինի տարայավորված ապրանքների արտադրությամբ ու իրացմամբ, ինչպես նաև տարայի արտադրությամբ, ներմուծմամբ կամ իրացմամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտների ամբողջ շրջանակի համար:

Այդուհանդերձ, ընդունելով, որ տարայի՝ ԱԱՀ-ով հարկման գործող կարգավորումը գուցե անթերի չէ, կարծում ենք, որ հարցը, այնուամենայնիվ, արժե քննարկման առարկա դարձնել՝ քննարկման գործընթացում ներգրավելով գործարար լայն շրջանակների և ոլորտի մասնագիտական-հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին: Հաշվի առնելով տարայի արտադրության կամ ներմուծման և հետագա օտարումների ամբողջ շղթայում ԱԱՀ-ի հաշվառման ու հաշվանցումների համակարգի սահուն կիրառությունը՝ կարծում ենք, որ խնդրի կարգավորման ավելի կիրառելի մոտեցում կարող է համարվել շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարայի արտադրության կամ ներմուծման և հետագա օտարումների ամբողջ շղթայում ԱԱՀ-ից ազատման արտոնության վերացումը: Արդյունքում կունենանք ԱԱՀ-ի հաշվառման ու հաշվանցումների կատարման ընդհանուր մոտեցում, որն առավել կիրառելի է և շղթայի տարբեր օղակներում գործող տնտեսվարող սուբյեկտների համար խնդիրներ չի առաջացնի:

Այս կապակցությամբ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը նախատեսում է նախարարության ենթակայությամբ գործող՝ Եկամուտների քաղաքականության ընդլայնված խորհրդում տարբեր ձեռնարկատիրական միավորումների և ոլորտի մասնագիտական-հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ բազմակողմանի քննարկման առարկա դարձնել շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարայի արտադրության կամ ներմուծման և հետագա օտարումների ամբողջ շղթայում ԱԱՀ-ից ազատման արտոնության վերացման հարցը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ ներկա փուլում Հայաստանի Հանրապետության կառավարությունն իրականացնում է ընդհանուր հարկային համակարգի վերլուծու-

թյուն՝ գնահատելու համար հարկային քաղաքականության և վարչարարության համարժեքությունն առկա տնտեսական իրավիճակին: Այս առումով, գտնում ենք, որ հարկային համակարգում հնարավոր փոփոխությունները պետք է կատարվեն համապարփակ ձևով: Հետևաբար, առանձին ուղղություններով տեղային փոփոխություններ կատարելը նպատակահարմար չէ:

Ամփոփելով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն օրենսդրական նախաձեռնության հեղինակներին առաջարկում է ներկա փուլում ձեռնպահ մնալ առաջարկվող օրենսդրական նախաձեռնության քննարկումից և խնդրո առարկա հարցի քննարկմանն անդրադառնալ այն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից առաջարկվող ձևաչափով քննարկումից և արդյունքների ամփոփումից հետո, երբ վստահ կլինենք, որ կատարվելիք օրենսդրական փոփոխությունն ընդունելի կլինի շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարայի արտադրության կամ ներմուծման և հետագա օտարումների ամբողջ շղթայում գործող տնտեսվարող սուբյեկտների համար:

Այդուհանդերձ, Հայաստանի Հանրապետության կառավարությունը պատրաստակամ է համագործակցելու օրենքի նախագծի հեղինակների հետ՝ գտնելու համար կրկնակի հարկման բացառման մեխանիզմներ, եթե, ինչպես նշված է օրենքի նախագծի հիմնավորման մեջ, «բազմակի օգտագործման նույն տարան ԱԱՀ-ով կրկնակի հարկվում է իր օգտագործման բոլոր փուլերում» պնդումը տեղին է:

Հարկ ենք համարում տեղեկացնել, որ օրենքի նախագծի ընդունման դեպքում անհրաժեշտություն կառաջանա փոփոխություն կատարելու Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունիսի 8-ի «Ավելացված արժեքի հարկով հարկման նպատակով տարան որպես շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարա որակելու չափանիշները սահմանելու մասին» N 644-Ն որոշման մեջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հուլիսի 2018 թվականի N 967 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Արման Պողոսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-339-14.06.2018-ՏՀ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2018 թ. հուլիսի 16
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-339-14.06.2018-ՏՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի ՀՕ-165-Ն հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 28-րդ կետի «արտադրողի» բառից հետո լրացնել «կամ իրացնողի» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

Համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 28-րդ կետի, շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարայով տարայավորված ապրանք արտադրողի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափանիշները բավարարող շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարայի օտարումը ազատվում է ԱԱՀ-ից:

Ելնելով վերը նշված հոդվածի պահանջից, ստացվում է, որ առեւտրային գործունեությամբ (մանրածախ եւ մեծածախ) զբաղվող կազմակերպությունների կողմից շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարայի օտարումը չի ազատվում ԱԱՀ-ից:

Այսինքն՝ առեւտրային գործունեությամբ (մանրածախ եւ մեծածախ) զբաղվող կազմակերպությունները, եթե համապատասխան հարկային հաշիվներով, արտադրողներից ձեռք բերեն շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարայով տարայավորված ապրանքներ եւ օտարեն, ապա օտարված շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարայի արժեքից պետք է հաշվարկեն եւ վճարեն ԱԱՀ եւ դա այն պայմաններում, երբ նույն ձեռք բերված շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարայի արժեքից ԱԱՀ չեն կարող հաշվանցել, քանի որ շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարայով տարայավորված ապրանք արտադրողը, համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 28-րդ կետի, դուրս գրված հարկային հաշվում տարայի արժեքից ԱԱՀ չի հաշվարկում: Ստացվում է, որ երկու ԱԱՀ վճարող կազմակերպություններից մեկը նույն ապրանքի իրացման արժեքից ԱԱՀ հաշվարկում է, իսկ մյուսը ոչ, որը հակասում է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթի պահանջին՝ այն է՝ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերը պետք է հավասարապես կիրառվեն բոլոր հարկ վճարողների նկատմամբ եւ, որ ամենակարեւորն է, շրջանառելի՝ բազմակի օգտագործման նույն տարան ԱԱՀ-ով կրկնակի հարկվում է իր օգտագործման բոլոր փուլերում:

Նախագծի ընդունմամբ կբացառվի տնտեսվարող սուբյեկտների կողմից կրկնակի ԱԱՀ գանձումը եւ որի արդյունքում կապահովվի շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարայով տարայավորված ապրանքների գների կայունություն: